ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Այգեպատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիա (տղաների խումբ) (4 դասաժամ), աշխարհագրություն (9 դասաժամ), մաթեմատիկա (19դասաժամ), ինֆորմատիկա (6 դասաժամ) առարկաներից ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվում է երկու փուլով՝ գրավոր /հանրակրթական առարկայական ուսումնական ծրագրերին համապատասխան/ և հարցազրույց /մանկավարժական մասնագիտական գործնական հմտություններ/:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Դիմում (ձև 1)

2. Փաստաթուղթ (դիպլոմ), <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ տեղեկանք :

3. Անձնագրի պատճենը

4. Ինքնակենսագրություն (ձև5)

5. Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/

6. 1 լուսանկար 3x4 չափի

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք:

8. ՀՀ-ի արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի ապրիլի 20-ից մինչև մայիսի 5 -ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից-15:00-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթն անցկացվելու է մայիսի 12-ին ժամը 14:00-ին Արարատի մարզի Այգեպատի միջնակարգ դպրոցում. հասցե Արարատի մարզ, գ. Այգեպատ, Մաշտոցի փ. 3:

Տեղեկությունների համար զանգահարել 093-16-69-69 հեռախոսահամարով: